ԵԴ2/27109/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

28 օգոստոսի 2023թ. **ք. Երևան**

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, նախագահությամբ դատավոր Ս. Ուլիխանյանի, ծանոթանալով «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայցադիմումին և դրան կից փաստաթղթերին,

ՊԱՐԶԵՑ

17.08.2023 թվականին «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հովհաննես Խաչատրյանը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ ՀՀ կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարության՝ ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-23/53 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով մարզագույքի (հանրակրթություն) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի՝ 5-րդ, 6-րդ, 8-րդ, 14-րդ, 19-րդ, 20-րդ չափաբաժինների համար «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը դատավորին է հանձնվել 23.08.2023 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Քննության առնելով հայցադիմումը, ուսումնասիրելով կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ ներկայացված հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին, առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ, 234.6-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

«Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի հայցադիմումն ընդունել վարույթ և եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2023 թվականին հոկտեմբերի 09-ին՝ ՀՀ դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **Ս.ՈՒԼԻԽԱՆՅԱՆ**